ԼՂԻՄ. ԱՆԿԵՂԾ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 24-ին, օրվա երկրորդ կեսին Ստեփանակերտ ժամանեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի ևս չորս անդամներ: Նրանց թվում են հանձնաժողովի նախագահը՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր կուսակցական վերահսկողության կոմիտեի նախագահի տեղակալ Սերգեյ Իոսիֆովիչ Մանյակինը, Վիլյուսի Վ. Կապսուկասի անվան պետական համալսարանի պրոֆեսոր Բրոնիսլավաս Կոնստանտինովիչ Գենզյալիսը, խորհրդային կանանց կոմիտեի նախագահ Զոյա Պավլովնա Պուխովան և Բելոռուսիայի պետական գեղարվեստական թատերական ինստիտուտի ամբիոնի վարիչ Օլեգ Վիկտորովիչ Չեռնիշովը:

Նույն օրը հանձնաժողովը հանդիպում ունեցավ ԼՂԻՄ-ում ամենամեծ արդյունաբերական ձեռնարկության՝ Ղարաբաղի մետաքսի կոմբինատի աշխատավորների հետ, որտեղ հիմնականում աշխատում են կանայք: Մետաքսագործները համակարծիք էին, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի միակ ճիշտ լուծումը ինքնավար մարզի վերամիավորումն է Հայկական ԽՍՀ-ի հետ:

Երեկ, հուլիսի 25-ին, խորհրդային պառլամենտի մի խումբ ներկայացուցիչներ մեկնեցին Շուշի: Նրանք հանդիպում ունեցան քաղաքի ու շրջանի կուսակցական-տնտեսական ակտիվի և ստեղծագործող մտավորականության հետ և լսեցին ԼՂԻՄ-ի հարցի վերաբերյալ նրանց կարծիքը, որը չի տարբերվում Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարության հայտնի դիրքորոշումից: Հյուրերը նաև ծանոթացան առողջավայր քաղաքի տեսարժան վայրերին և դրա շրջակայքին:

Հանձնաժողովի մյուս անդամները շարունակեցին աշխատանքը Ստեփանակերտում, որի ընթացքում նրանց հայտնվեց ինքնավար մարզի արհմիութենական, կոմերիտական, կանանց և մյուս հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների տեսակետը Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի վերաբերյալ:

Որպես կանոն, ԼՂԻՄ ժամանած ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները իրենց աշխատաժամանակի մի մասը տրամադրում են անձնական հարցերով բնակչության ընդունելությանը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ